

դ. Ֆուրմանով



ՍԼՈՄԻԽԻՆԻ
ՄԱՐՏԸ

ՊԵՏԶՐԱՏ

891.710
Ֆ-90

2011-05

894.715

8-90

Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎ

ՍԼՈՄԻԽՆԻ ՄԱՐՏԸ

Շապկի Սկարբ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Քարգմ. Ս. ՈՀԱՆՅԱՆ

ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿԵՄ ԿԿ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938 թ.

ՄԻՋԻՆ ՅԵՎ. ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՀԱՄԱՐ



6363
38

ՍԼՈՍԻՒՆԻ ՄԱՐՏԸ

(Դ. Ֆուրմանովի «Չապայեվ» վեպից, մոնսաժ՝ պատմելու համար)

Այրված ստանիցայի ավերակների մեջ, բաց
յերկնքի տակ դասավորվել եր գունդը: Տեղ-տեղ,
մարող խարույկների մոտ, կարելի չեր նկատել
միայնակ նստած մարտիկների թեքված կերպա-
րանքները: Նրանք ծուլորեն կրակն էյին նետո. մ
տափաստանում ժողոված խոնավ տաշեղներն
ու ձողիկները, — տափաստանում փայտ չես
գտնի, — մտահոգված խառնում էյին ածուխը, վոր-
պեսզի խարույկը չմարի, չմնան սև խավարի մեջ:

Իսկ գիշերն ընկղմվել եր թանձր խավարի
մեջ: Սողալով ամենուր, գոտկավորվելով ա՛ն ու
յ՛րկյուղով, սփռելով միլիոնավոր շշուկ ու սոսա-
փլուն — նա ավելի չեր սրում տափաստանի ահավոր
լուրթյունը:

Տափաստանում, ավերակների մոտ, տեսիլի
նման, սահուն ու վսեմ շարժվում էյին հսկա-
յական բրդոտ ուղտերը: Արագորեն խավարի մեջ
էյին սուզվում ինչ-վոր տարրորինակ սավերներ:

Սև խավարից հանկարծ դողդոջուն կրակի լուսավոր շերտն ելին բարձրանում՝ մարդկային կերպարանքներ և նույնպես հանկարծակի արագ անհետանում գիշերային անհատակ խավարի մեջ։ Մմեն ինչի մեջ կար մի անբացատրելի, խիստ կենտրոնացում, բացահայտ սպասումն ինչ-վոր մեծ ու վերջնական բանի...

Մարտի սպասում...

Դեռ բոլորովին մութ էր, յերբ ձիերը թամբեցին և Տալովկայից քառասորոփ շարժվեցին դեպի Պորտ-Արտուրը։

Գնում ելին, չեյին խոսում։ Միայն Պորտ-Արտուրի մոտ, յերբ յերկնքի աղջամուղջում փայլատակեցին շրապնեղների առաջին պալթյունները, Չապանը դարձավ դեպի Ֆյոդորը։

— Սկսվեց...

— Այո...

Յեվ նորից լռեցին ու վոչ մի խոսք չսացին մինչև գյուղակը։

Մոտեցան Պորտ-Արտուրին։ Չապանը ցած թռավ ձիուց, բարձրացավ կանգուն մնացած աթարի բարձր պատը և հեռադիտակով նայեց այն կողմը, վորտեղից պոկվեց ումբը։ Մթնշաղը սողալով անհետացավ արդեն բոլորովին լույս եր։

Այստեղ մնացին մի քանի րոպե և նորից նժույգները հեծնելով՝ արշավեցին առաջ։

Մինչև առաջին շրթան մոտ կես վերստ եր։ Վորոշեցին գնալ այնտեղ։ Բայց հանկարծ պոկվեց մի սուր քամի՝ անակնկալ, անսպասելի, ինչպես դա հաճախ տեղի յե ունենում տափաստաններում, — փխրուն ձյան փոշին ուժգնությամբ խփեց նրանց դեմքին, լցրեց աչքերը՝ թույլ չավեց տեսնել ու առաջ շարժվել։ Հարձակումը դադարեցրին։ Սակայն բուքը յերկար չտևեց։ Կես ժամից շրթաները նորից շարժման մեջ ելին։ Չապանն ու Ֆյոդորն անցան ճակատի թևերով, — այժմ նրանք գտնվում էին առաջին շրթայում։ Աջ կողմում յերեկաց Ուլչինիկով գյուղակը։

— Յենթադրում եմ այստեղ նստել են կազակները, — ասաց Չապանը, ցույց տալով գետի կողմը, — պետք է, վոր կռիվ լինի գյուղի մոտ։

Այս անգամ Չապանը սխալվեց. հետապնդվող կազակները չեն ել մտածել գյուղակից կառչել։ Նրանք կրակում ելին միայն խաբելու համար և փախչում էին առանց դիմադրութուն ցույց տալու։

Մոտենում էին Սլոմիխինին։ Մինչև կայարանը մնացել էր մեկուկես, յերկու վերստ։ Այստեղ լախն, տափակ հարթություն է. ստանիցայից այստեղ խփելն առանձնապես հարմար է ու հեշտ։ Բայց կազակները լուռ են... Ի՞նչու յեն լուռ։ Այդ չարագուշակ լուռթյունը սարսափելի յե ամեն հրաձգությունից։ Արդյոք խորա-

մանկություն չէն անում, ծուղակ չէն սարքում:
Միայն Ուզենի աչս ափին կռվի բռնվեցին, իսկ
այստեղ — հանգիստ են:

Թույլ տալով, վոր կարմիրները մոտենան յերեք
հարյուր սաժենի վրա, կազակները հանկարծ խփե-
ցին հրետանային կրակով: Հրետանու յետևից
կողքի ջրաղացներից տկտկացին գնդացիները:

Շղթան պառկեց, բարձրացավ, մի ակնթարթ
վազե՛վազ սլացավ առաջ ու նորից պառկեց. ձյան
մեջ արագությամբ փոքրիկ փոսիկներ փորելով՝
գլուխները կախեցին այստեղ՝ մեռածների նման:

Թնդանութների մոնչյուն եր չորս կողմում:
Դղրդոցը պատել եր ամբողջ դաշտը. կարծես այս
ու այն կողմ նետվում ու մահացու խոցից մորն-
չում եր շրջապատված մի վիթխարի գազան:

Տնքոցի, սուկոցի, գղրդոցի մեջ, կրակոցով
վոգևորված՝ աշխուժ շարժվում էին շղթաները:

Կարմիր բոլորքով սև գլխարկը գլխին, քա-
մու հետ սլացող դևի թևերի նման բացված սև
յափնջին ուսերին՝ Չապաևը ճակատի մի ծայրից
մյուսն եր սլանում: Յե՛վ բոլորը տեսնում էին,
թե ինչպես այստեղ ու այնտեղ, հանկարծ յերե-
վում ու արագ անհետանում եր նրա նիհար կերպա-
րանքը՝ կարծես կազակային թամբին ձուլված: Հենց
արշավելիս ելնա հրամաններ եր տալիս, հրա-
մաններ անում, հաղորդում անհրաժեշտը, Յե՛վ հրա-

մանատարները, վորոնք այնպես լավ ճանաչում
էին իրենց Չապային, կարճ, արագ նրան հաղոր-
դում էին կարեվոր տեղեկությունները. վոչ մի
ավելորդ բառ, վոչ մի ակնթարթ հապաղում:

— Վե՛րջ են բոլոր գնդացիները — հարցնում
եր Չապաևը, սրարշավելով առաջ:

— Կարգին են. — գոռում եր մեկը շղթաների
միջից:

— Քանի՞ սալակ ումբ կա:

— Վեց...

— Վորտե՛ղ ե հրամանատարը:

— Չախ թե՛վում...

Նա սլանում եր դեպի ձախ թևը:

Շղթաներն առաջ էին նետվում շեշտակի
մարտով:

Նույն վալրկյանին բացվում էին կազակա-
յին գնդացիները: Շղթաները յերեսնիվայր ընկ-
նում էին ձյան մեջ, պառկում մեռածի պես,
սպասում նոր հրամանի:

Շղթաների յետե՛վ սլանում եր Չապաևը,
կտրուկ, արագ, տիրաբար հրամաններ եր տալիս,
պատասխաններ վորսում:

Ահա նա թափով շրջեց ձիու գլուխը ու սլա-
նում ե դեպի մարտկոցի հրամանատարը:

— Խփել ջրաղացներին:

— Հնձել ջրաղացների բոլոր գնդացիները:

— Ստանիցային ձեռք չտալ, մինչև յես
չասես:

Ու արագ շուռ գալով, թափով սլացավ շղթա-
ների մոտ: Ավելի արագ, ավելի ուժեղ ու ավելի
կատաղի սկսեցին խոսել թնդանոթները: Ստանի-
ցան ջղաձգորեն շտապում էր կասեցնել ընդ-
հատ վազքով առաջացող շղթաները: Զրազաց-
ներ վռնացին ու հանկարծ պայթեցին ականջ
ծակող, սուր ճայթյունով: Բոլոր գնդացիները
գործի դրվեցին միանգամից: Յերկու կողմերն
ել սաստկացրին կրակը, բայց բոլոր առ բոլոր կար-
միր բանակայիններն ավելի ու ավելի ելին մո-
տենում. ավելի անվրեպ են դիպչում ու պայ-
թում ուռմբերը, մարդու շունչ է կտրում այն
մտքից, վոր մահն այդքան մոտ է, վոր անա կողքիդ
է թշնամին, վոր պետք է տրորել նրան, նրա
վրայով մտնել ստանիցան...

Հուզված, վառվող աչքերով, շղթայի մի ծայ-
րից մյուս ծայրն է նետվում Չապաևը: Սուրհան-
դակներ է ուղարկում մեկ գնդացիների մոտ,
մեկ արկերի, մեկ գնդի հրամանատարի մոտ, կամ
կրկին ինքն է արշավում և մարտիկները տեսնում
են թե ինչպես ամենուրեք՝ մերթ յերթվում, մերթ
ծածկվում է Չապաևի նիհար կերպարանքը: Ահա
նրա մոտ թռավ հեծյալ մարտիկը, շտապ-շտապ
ինչ-վոր բան առաց.

— Վորտեղ, ձախ թեվում... գոչեց Չապաևը:

— Չախում...

— Շատ են...

— Ծիշտ այդպես...

— Գնդացիները տեղն են...

— Ամեն ինչ կարգին է... մարդ ենք ուղարկել
ոգնություն ստանալու:

Յեվ նա քշում է այնտեղ, ձախ թեղ, վորտեղ
սպանակին առաջանում է վտանգը: Կազակները
հոսում են լավալի նման... արդեն շատ մոտ են
յերթվում նրանց արշավող ձիերը... Չապաևը նետ-
վեց գումարտակի հրամանատարի մոտ:

— Տեղից չշարժվել: Բոլորը շղթաների մեջ...
համազարկ կրակ:

— Ծիշտ այդպես...

Նա անցավ գետնին կաած մարտիկների շար-
քերով:

— Չվհատվեք, չվհատվեք տղերք: Չբարձրա-
նալ: Չեխեք... թողեք մոտենան և կրակ հրամա-
նով... բոլորդ ձեր տեղերում... կրակ հրամանով...

Սյուպիսի հատու խոսքեր վորքան հարկավոր
են մարտիկներին ճակատագրական վայրկյան-
ներին: Նրանք լսում են, նրանք տեսնում են,
վոր Չապաևը նրանց հետ է: Յեվ հավատում են, վոր
պարտություն չի լինի:

Հենց վոր թշնամու լավան հասավ հրացանի

դիպուկութեան գիծը, վորոտաց համազարկը, հետո՝ հաջորդը...

Սկսվեց գնդացիներին շղային շառաչը՝

Տրա-տա-տա... Տա-տա-տա... Տրա-տա-տա-տա-տա... Նվագում եյին գնդացիներն անընդհատ՝

Ախ՛խ... խխ՛խ... Ախ՛-խխ՛խ... անխ՛-խխ՛խ... ոռո—ձայնակցում եյին հատու, ներգաշնակ համազարկերը՝

Հավան կանգ առավ, խառնվեց, մի պահ քարացավ։

Գը՛ռ... գը՛ռ... ոռ... բացվում են չոր համազարկերը։ Մի վայրկյան ևս — և լավան չի շարժվում։ Ելի մի վայրկյան և թշնամու ձիերը գլուխները շուռ տվին։ Կազակները հետ են արշավում, իսկ նրանց հետեվից՝

Տրա-տա-տա-տա-տա... տա-տա...

Գրոհը ջախջախված ե։ Մարտիկներն արդեն գետնից բարձրացնում են սպիտակ — ձյունոտ գլուխները։ Նրանց անհանգիստ, դեռ չխաղաղված դեմքին նշմարվում ե տազնապալից, յերկշուտ ժպիտը... Շղթաները բոլորովին մոտ են ստանիցային։

Ընդհատումներով մեկական անցումն ավելի ու ավելի հաճախակի յե դառնում։ Կազակների գնդացրային կրակը վզոցով թափվում ե շղթայի վրա։ Յեվ հենց ուզում են բարձրանալ թե չե,

կազակային համազարկերը բացվում են, իսկ նրանց ծածկում ե գնդացրային ժխորի հուզիչ, մանր թրթռոցը։ Բայց անա մարտիկները վազեցին դեպի առաջին ջրաղացները, խմբերով թագնվեցին թմբերի ցանկապատերի տակ և խորացան, խորացան ստանիցայի մեջ... և հանկարծ անսպասելի վորոտ...

— Ընկերներ ոռոմ... ոռոմ... ոռոմ...

Շղթան ցնցվեց, ձգվեց առաջ. հրացանները հորիզոնադիր՝ սվինամարտի պահած՝ թեթև, հատու վազքով նետվեցին վերջին վճռական գրոհին...

Կազակների գնդացիներին ձայնն ել չի լսվում։ Ետդն ու տեղը սրի են քաշել թշնամու գնդացիները... Ստանիցայում կարմիր բանակայինների աղմկոտ ալիքն ե... հեռու, հեռու հազիվ յերեվում են անհետացող թշնամու վերջին ձիավորները...

Կարմիր բանակը մտավ Սլովիխինսկայա ստանիցան։



Տեխ. խմբագրիչ՝ Ան. Դաստարյան
Սրբագրիչ՝ Խ. Այվադյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Մաթիկյան
Գլավլիտի լիազոր № 2—3628
Հրատ. 4528, պատվեր 193, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 1938 թ. փետրվարի 27-ին
Մտորագրված է ազգադրության 1938 թ. մարտի 17-ին
Թուղթը 72 X 105, $\frac{3}{4}$ տպ. մամ., հեղին.՝ $\frac{1}{4}$ մամ.,
16320 ապ. նիշ:
Գինը

Պետհրատի 2-րդ տպարան, Յերեվան, Նալբանդյան 5

ՀՀ Ազգային գրադարան



NL0386887

5709